Տրակտորային գործարանը սեակսո՞ւ սեակսո՞րի յետեւից ուղարկում է կոլանատեւություններին: Կոլանատեւություններում դաշտերը վարում են սեակսորով, ցանում են Եւրեացանով, հնձում են հնձող մեքենայով:

## XIV. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՂ ՀՈԴԸ

(Ը ձայնավորը բառավերջում յեվ բառասկզբում)

140. Արտադրեցեք նախ՝ III և IV և ապա՝ II և V նախադասությունները:

Յուրաքանչյուր նախադասությունն սկսեցեք նոր առից:

### Աղվեսն ու նապաստակը

1. Ցուրտ ձմեռ էր:
2. Քաղցած աղվեսը դուրս լեկավ վորսի:
3. Թփի տակ կուչ էր լեկել մի նապաստակ:
4. Նապաստակն զգաց թշնամուն ու վախալի:
5. Աղվեսն էլ ընկավ վախկոտ նապաստակի լետեվից:

### Հարցեր

1. Յերրորդ նախադասության մեջ հայտնի՞ յե, թե վճր նապաստակն է կուչ լեկել:
2. Իսկ չորրորդ նախադասության մեջ հայտնի՞ յե, թե վճր

նսպաստակն և վախել. մի վորեն նսպաստակ, թե՛ մեզ ծանոթ  
վորոշ նսպաստակ՝ ք իի ցօղ կուշ յեզած նապաստակ:

3. Ինչո՞ւ արդիւս գոյականը յերկրորդ նախադասութեան մեջ  
վերջանում և ք-ով, իսկ հինգերորդ նախադասութեան մեջ ց-ով:

4. Ինչո՞ւ չորրորդ նախադասութեան մեջ նսպաստակ գոյ-  
ականը վերջացել և և-ով և վոչ ք-ով:

Ը կամ և մասնիկը գրվելով գոյականի  
վերջում՝ տալիս և նրան վորոշ ու ծանոթ ա-  
ռարկայի նշանակութեան, կոչվում և վորոշող  
հոդ:

Բաղաձայնով վերջացող բաների վրա, յերբ  
հաջորդ բառը նույնպէս բաղաձայնով և սկըս-  
վում, գրվում և ը հոդը: Երբ հաջորդ բառը  
ձայնաւորով կամ գր, գգ, սք, սկ, սպ, սս, սմ, ցս,  
յերկբաղաձայններով և սկսվում, մեծ մա-  
սամբ և վորոշող հոդ և գրվում:

141. Արտագրեցե՛ք՝ Գրիգոր անվան տեղ Գեղամ, իսկ Կարո  
անվան տեղ Չարուհի գործածելով:

Գրիգորը գրեց: Գրիգորն ասաց:

Գրիգորը կարգաց: Գրիգորն ողնեց:

Կարոն կարմիր տախտակին բարձրացվեց:

Չայնաւորով վերջացող բաների վրա գըր-  
վում և և վորոշող հոդը:

142. Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք վորոշող հոդերը:

Անհաղթ բանակը

Կարմիր բանակը,

Անհաղթ բանակը,

Մեր Խորհուրդները



Արթուն պահակը,  
 Զգաստ և անքուն,  
 Գիշեր ու ցերեկ  
 Դիտում է, հսկում,  
 Վոր մեր թշնամին  
 Մոտ չգա լերբեք,  
 Խորհրդի լերկրին:

143. Արտադրեցեք և ընդգծեցեք ը ձայնավորով սկսվող դոյականները:

### Ընկույզը

Ընկուզենին ընդարձակ տարածել էր իր ճյուղերը:  
 Ընձակը պառկել էր նրա տակը:

— Զարմանալի բան է, — ասում էր նա, — այս ահա-  
 գին ծառը տես, իր պտուղը տես: Արա պտուղը դդումից  
 էլ մեծ պեաք է լիներ:

Հենց այդ ժամանակ մի ընկույզ պոկվեց, ընկավ քը-  
 թին՝ արնացրեց:

— Վա՛յ, — վեր թռավ Ընձակը, — ինչ լավ էր՝ դդում  
 չէր, թե չէ դլուխս հջարդվեր:

144. Արտադրեցեք զբ, ւթ, սթ, սպ, յերկբադաձայններով  
 սկսվող բառերը:

### Զբոսանքին

Յերիս ընկեր լերեկոյան զբաղմունքը վերջացրին,  
 շտապով ընթրեցին ու գնացին զբոսներու: Կարտերի մա-  
 սով անցնելիս՝ Գարեգինն ասավ.

— Սեփան, սպասիր, ական ինչ լերկար սսվերներ  
 ունենք:

— Ճիշտ վոր՝ Գարեգին, լեթե մենք արչափ լինե-  
 լինք՝ մեր աներն ինչ չափի պեաք է լինելին:

1. Ը ձայնաւորը բառասկզբում միշտ գրվում է

2. Քանի՞ հնչյունից են կազմված յօսպ, սօվեր և մնացած ընդգծված բառերը:

3. Իսկ քանի՞ սառույ կն գրվում այդ բառերը:

Ը ձայնաւորը բառասկզբում սովորաբար գրվում է: Չք, զգ, սք, սկ, սպ, սս, սֆ, օս, յերկբաղածայններով սկսվող բառերի սկզբում կարճ Ը լսվում է, բայց չի գրվում. որինակ՝

<u>սք</u>	<u>սկ</u>	<u>սպ</u>
<u>սքաղնում</u>	<u>սկիւր</u>	<u>Սքեխում</u>
<u>սքում</u>	<u>սկւել</u>	<u>սպելք</u>

<u>սզ</u>	<u>սպ</u>	<u>չք</u>
<u>սզայ</u>	<u>սպասել</u>	<u>չքայ</u>
<u>սզայսում</u>	<u>սպիրակ</u>	<u>չքեխում</u>

<u>սօ</u>	<u>սֆ</u>	<u>սօֆ</u>
<u>սօսիւել</u>	<u>սֆանկանայ</u>	<u>սօֆում</u>



145. Արտագրեցեք և յւերաքանդուր բառի վեր'ը գրեցեք  
հնչյունների թիվը՝

~~ակիր, ակնակ, արայակամե,  
արորակեր, շքասպ, շքեհարամե,  
պրասակ, պրադմունկ, պգուչ,  
պգեար, պպունկ, պպիրակ, պքախ-  
վեյ, պքամեչ եչի~~

146. Արտագրեցեք նախորդ աշխատանքի բառերը՝ վանկե-  
րի բաժանելով:

Որինակ՝ ըս-կը-սել, ըզ-դաստ, ըս-պա-նել:

147. Ինքներդ բառեր կազմեցեք  
սպ, զբ, զգ, ռս, սս, սկ  
յերկրագաձայներով և սպա՝ գրեցեք:

## XV. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

(Յ ձայնակապ)

148. Արտագրեցեք ընդդ՛ամ գոյականները՝

1. Պահարանում մի դանակ կա:
2. Դանակի բերանը սուր է:
3. Մատս մի դանակի կզափ:
4. Յես սրեցի մի դանակ:
5. Մի դանակից ձկան հոտ է գալիս:
6. Հողը դանակով պետք է կտրել:
7. Դանակում ու՛ժ չի մնացել:

1. Ի՞նչ կա պահարանում. — դանակ
2. Ինչի՞ բերանը սուր է. — դանակի
3. Ինչի՞ կպալ մասս. — դանակի
4. Ի՞նչ սրեցի. — դանակ
5. Ինչի՞ց ձկան հոտ է գալիս. — դանակից
6. Ինչո՞վ պետք է հացը կտրել. — դանակով
7. Ինչո՞ւմ ուժ չի մնացել. — դանակում

1. Ի՞նչ. — դանակ
2. Ինչի՞. — դանակի
3. Ինչի՞. — դանակի
4. Ի՞նչ. — դանակ
5. Ինչի՞ց. — դանակից
6. Ինչո՞վ. — դանակով
7. Ինչո՞ւմ. — դանակում

149. Նախորդ աշխատանքի ձեւով արտադրեցէք բնորոշված զո ախաններ, վորոնք այստեղ վորոշող հոդով են դործածված, և նրանց առաջ գրեք համապատասխան հարցեր:

### Աշխատանքը

Առաջ աւխասանի համարվում էր ծանր բեռ: Աւխասանի գերը փոխվել է մեղ մոտ: Ա՛ժմ բոլոր աշխատավորները լծվել են աւխասանի. ուրիշ վերաբերմունք կա դեպի աւխասանի: Աւխասանից մենք վոչ միայն չենք փախչում, այլ մենք պարծենում ենք աւխասանով: Աւխասանում մենք տեսնում ենք պտավի, փառքի, հերոսութիան և արիութիան գործ:

150. Համեմատեցեք առակերս և առակերս գոյականների փոփոխութուններն իրենց վերջավորութունների համեմատ:

1. ո՞վ	աշակերտ	աշակերտը
2. ո՞ւմ	աշակերտի	աշակերտին
3. ո՞ւմ	աշակերտի	աշակերտին



4. ո՛ւմ	աշակերտի	աշակերտին
5. ումի՞ց	աշակերտից	աշակերտից
6. ումո՞վ	աշակերտով	աշակերտով
7. ո՛ւմ մեջ	աշակերտի մեջ	աշակերտի մեջ

**Գոյականների վերջավորութ յունները**  
 փոփոխվում են՝ նայած հետեվյալ հարցերից  
 փորին են պատասխանում.

ո՞վ	ո՛ւմ	ո՞ւմ	ո՛ւմ
ի՞նչ	ինչի՞	ինչի՞	ի՞նչ
ումից	ումով	ո՛ւմ մեջ	
ինչի՞ց	ինչով	ինչո՛ւմ	

Գոյականների ձեւերը, փորոնք համապատաս-  
 խանում են այստեղ արված հարցերին, կոչվում են  
 հոլովներ:

Հայերենում կա յոթ հոլով

Հոլովներ ի՞նչ հարցերի չե պատասխանում

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1. Ուղղական  | ո՞վ ի՞նչ (ի՞նչը)    |
| 2. Սեռական   | ո՞ւմ ի՞նչի          |
| 3. Տրական    | ո՞ւմ ի՞նչի (ինչի՞ն) |
| 4. Հայցական  | ո՞ւմ ի՞նչ (ի՞նչը)   |
| 5. Բացառական | ումից ի՞նչից        |
| 6. Գործիական | ումով ի՞նչով        |
| 7. Ներդրական | ո՞ւմ մեջ ի՞նչում    |

Անձ ցույց տվող գոյականների ներգոյականն ար-  
 տահայտվում է սեռական հոլովով և մեջ բառով՝ աշա-  
 կերտի մեջ, բանվորի մեջ:

Նախադասության մեջ ուղղական հոլովը լեն-  
 թակաչի պաշտոն է կատարում, իսկ մյուս հոլովները՝  
 լրացումների:

Գոյականների փոփոխումը հոլմներով կոչվում է հոլովում:

Թռավ

ի՞նչը:



Ուղղական

հոլով

սավառնակը

ի՞նչի

ողաչուն

կամերիտա-  
կան եւ



Սեռական

հոլով

սավառնակի

Պիտներները

մոտեցան

ինչի՞նս:



Տրական

հոլով

սավառնակին

Մենք

տեսնում ենք

ի՞նչը:




Հայցական

հոլով

սավառնակը



<p>Մենք հեռացանք ինչից:</p>	 <p>սավառնակից</p>	<p>Բացառական հալով</p>
<p>Մենք պարծենում ենք ինչով:</p>	 <p>սավառնակով</p>	<p>Գործիական հալով</p>
<p>Ուղեվորները տեղավորվում են վճարեղի:</p>	 <p>սավառնակում</p>	<p>Ներդրական հալով</p>

152. Հոլովեցեք գլուզանսեսս, բուժակ, օրակօտ, դպրոց գոյականները առակերս և առխառան գոյականների ձեվով յեզակի և հոգնակի թվով, վորոշող հողով և առանց հողի:

ՀՈՂՈՎՄԱՆ ՊԱՏԿԵՐ

Հոլովներ	Հարցեր	Յեզակի թիվ	Հոգնակի թիվ
Ուղղական	ա՞յ	աշակերտ աշակերտը	աշակերտներ աշակերտները
Մեռական	ա՞ւմ	աշակերտի	աշակերտների
Տրական	ա՞ւմ	աշակերտի աշակերտիք	աշակերտների աշակերտներիք

Հայցական	ճւմ	աշակերտի աշակերտին	աշակերտների աշակերտներին
Բացառական	ումի՞ց	աշակերտից	աշակերտներից
Գործիական	ումո՞ւլ	աշակերտով	աշակերտներով
Ներգոյական	ո՞ւմ մեջ	աշակերտի մեջ	աշակերտների մեջ
Ուղղական	ի՞նչ ի՞նչը	աշխատանք աշխատանքը	աշխատանքներ աշխատանքները
Սեռական	ինչի՞	աշխատանքի	աշխատանքների
Տրական	ինչի՞ ինչին	աշխատանքի աշխատանքին	աշխատանքների աշխատանքներին
Հայցական	ի՞նչ ի՞նչը	աշխատանք աշխատանքը	աշխատանքներ աշխատանքները
Բացառական	ինչի՞ց	աշխատանքից	աշխատանքներից
Գործիական	ինչո՞ւլ	աշխատանքով	աշխատանքներով
Ներգոյական	ինչո՞ւմ	աշխատանքում	աշխատանքներում

153. Հոլովեցեք.

լիճ, գիծ, ամիս, կիր, ցից, գիր, լերկիր, լերգիչ,  
Մկրտիչ,  
դուռ, ջուր, անասուն, սուր, հուր, կարկուտ, բուր

Հոլովելու ժամանակ բառի վերջին փակ  
(բաղաձայնով վերջացող) վանկի՝ ի և ու ձայ-  
նավորները կարող են ու դառնալ (վոր չի  
գրվում), կամ զուրս ընկնել որինակ՝

գիրք-գրքի-գրքի      թուղթ-թղթի-թղթի  
ամիս-ամսի              անասուն-անասնի



154. Շարունակեցէք հորովելը.

Յեզակի

Ուղղ. ձու	կատու	վերարկու
Սեռ. ձվի	կատվի	վերարկվի (ուի)

Հոգնակի

Ուղղ. ձվեր	կատուներ	վերարկուներ
Սեռ. ձվերի	կատուների	վերարկուների

Ու-ով վերջացող միավանկ բառերի (բու, ձու, լու) ձայնավորը, հորովելու ժամանակ փոխվում է վ-ի. որինակ՝ ձվի, ձվից, ձվեր, ձվերի...

Ու-ով վերջացող բազմավանկ բառերի ու-ն միայն յեզակիում է վ-ի փոխվում, իսկ հոգնակիում՝ վոչ. որինակ՝ կատու, կատվի, կատվից, բայց՝ կատուներ, կատուների... վերարկու, վերարկվի, վերարկվից, բայց վերարկուներ, վերարկուների...

155. Վերոհիշյալ ձեզով հորովեցէք.

բու, լու, առու, Բաքու, լեզվերու, Դավալու, Դամարու, լեզու, մեզու

156. Արտագրեցէք Կիմա, Կարո և Նունե գորականների հարվումները և ընդդեմեցէք այի, ոյի եյի կապակցությունները.

Ուղղ.	Կիմա	Կարո	Նունե
Սեռ.	Կիմայի	Կարոյի	Նունեյի
տ.	Կիմային	Կարոյին	Նունեյին
Հայց.	Կիմայի՞ն	Կարոյի՞ն	Նունեյի՞ն
Բաց.	Կիմայից	Կարոյից	Նունեյից

Գործ            Կիմայով    Կարոյով    Նունեյով  
Ներգ.           Կիմայի մեջ   Կարոյի մեջ   Նունեյի մեջ

Ա, Ե, Ո ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում՝ յերկու ձայնավորների մեջ պետք է գրել յ տառը փորպես ձայնակապ:

157. Վերոհիշյալ գոյականների պես հոլովեցեք.

Ռոզա, Կլարա, Նադեժդա, Աննա, Մոսկվա, Ախտա,  
գուլպա

Յեզգինե, Զարե, Հռիփսիմե, Կարինե, Մարինե, բա-  
զե, բոպե

Սաքո, Սարո, Գեվո, Մկո. Մաւ, Մարո, Կինո, ուս-  
դիո

158. Արտագրեցեք յ ձայնակապի վերաբերյալ այս ուղ-  
ղագրական աղյուսակը:

~~այի, այե, այա, այու, այո~~  
~~եյի,            եյա,    եյու,~~  
~~ոյի, ոյե, ոյա, ոյու, ոյո~~



159. Արտագրեցեք և ընդգծեցեք ձայնակապերը

Արասևայիս, րուսեյի, կիևոյի  
 եւշրայտո, րուսեյականն նոյեմբեր  
 Դայասարանն գործունն գոյականն  
 սրայուսակ, եյուրչունն կոյուղի  
 կայոյ, օւարիոյով

160. Ասացեք բառեր և գրեցեք

յ ձայնակապ ունեցող

այա, այո, այի, եյի, ոյի կապակցութիւններով:

161. Արտագրեցեք՝ բառերը վանկերի բաժանած և ընդգծեցեք յ-ով յերկնի: յունները:

Աւստ-յիև, կաստ-յիև, շնարո-յով,  
 կիևտ-յով, կարբիւնե-յիև, շնա-յիս,  
 կա-յարանն, նա-յող, ե-յակ, կա-յեյի,  
 ներգո-յականն, գո-յուրչունն, ե-յուրչունն

1. Վանկերի բաժանելու ժամանակ յ ձայնակապը վեր վանկին և անցնում:

2. Յ ձայնակապը նախորդ, թե՛ հաջորդ, ձայնավորի հետ և յ-ով յերկնիյուն կազմում:

Յ ձայնակապր միշտ միանում ե հաջորդ  
ձայնավորի հետ և նրա հետ կազմում ե յ-ով  
յերկհնչյուն:

Սյ, ոյ, ույ, էյ

յա, յո, յու, յե, յի, յը

յ-ով յերկհնչյունները ե/և

162. Արտագրեցեք՝ բառերը վանկերի բաժանելով և ընդգը-  
ծեցեք յ-ով յերկհնչյունները:

Հայաստանում մայիսյան ապստամբութան առաջին  
դրոշակը բարձրացրեց Մուսայելյանի զբաճանացքը: Նո-  
յեմբերին Արամայիսը Աննայի Մարոյի և Հռիփսիմեյի հա-  
մար կալարանի կիսակից գնեց հալոց լեզվի դասագրքեր  
և պալուսակներ:

163. Արտագրեցեք և իա, իո, իու, և իե յերկձայնավորներ  
ըն ընդգծեցեք:

Մելիցիոներներ Գաբրիելին և Ամայիային ուղարկե-  
ցին սանատորիա: Մարիամը և Բենիամինը «Բնտերնա-  
ցիոնալ» ելին լեբզում: Պրոներներ Ըոսիֆը և Բենիա-  
մինը ռադիո-բարձրախոս ունեն: Յերեմիան ձիով գնաց  
«Միոթուն» կոլտնտեսութան դաշտը:

Ի ձայնավորին այլ ձայնավոր հաջորդելու գեզքում ձա-  
նակապ դրվում ե

Իա, իո, իու, իե յերկձայնավորների մի-  
ջեւ յ ձայնակապ չի դրվում:



իւս, իո, իու, իե

165. Արտագրեցէք այբբենական կարգով.

ա) շնորիւս, շաւիիւս, Պա-  
նիւտ, իուսիժ, Քննիւսիւն, Յե-  
րեւիւս

բ) Վիլիյիւսներ, ուստիո, ա-  
կաւիւս, սամաւորիւս

166. Ասացէք բառեր իա, իո, իու, իե յերկձայնալորնե-  
քով և ապա՝ գրեցէք:

## XVI. ԱԾԱԿԱՆ

167. Տրված գոյականների համար ասացէք համապատաս-  
խան հասկօրթումներ, վորոնք զույց տան, թե այդ առարկաներն  
ինչպիսի յեն ըստ նյութի, ձեզի կամ համի:

պողպատյա թուր	հարթ դաշտ	քաղցր մեղր
• • • • պահարան	• • • • զնդակ	• • • • խինին
• • • • շիշ	• • • • նստարան	• • • • խմոր
• • • • դաժաթ	• • • • տեար	• • • • սոխ

Առարկայի վորպիսությունը կամ հատկությունը (գույնը, համր, ձեւը, նյութը) ցուց տվող բառը կոչվում է ածական:

Ածականը պատասխանում է ինչպիսի՞ հարցին և նախադասության մեջ լինում է լրացում:

168. Գոյականների մոտ գրեք հարմար ածականներ:

Ինչպիսի՞ առարկաներ են լինում

աշխատանք մըջում	.....	ածուխ
..... կրիա	.....	քացախ
..... աշակերտ	.....	դրոշ
..... մեղր	.....	բաժակ
..... շուշան	.....	պղպեղ
..... մանուշակ	.....	արեւի

169. Կարդացե՛ք՝ կետերի տեղը ածականներ դնելով:

Գարունը յեկավ

..... (ինչպիսի՞) գարունը յեկավ: ..... (ինչպիսի՞) արեւը վալլում է: ..... (ինչպիսի՞) առուն է խոխոջում: ..... (ինչպիսի՞) խոտը յերեւաց: ..... (ինչպիսի՞) բողբոջներն արձակվեցին: ..... (ինչպիսի՞) ծաղիկները ծաղկեցին: ..... (ինչպիսի՞) թռչունները թռչում են: Նրանց ..... (ինչպիսի՞) ձայները լսվում են: ..... (ինչպիսի՞) արոտում կովերն արածում են:

170. Կարդացե՛ք կետերի տեղը նախաի՞ք ածականներ դնելով:

Առաջ և հիմա

Առաջ բանվորներն ապրում էին խոնավ, մութ և ցուրտ բնակարաններում: Այժմ մեզ մոտ խորհրդային իշխանությունը բանվորներին տալիս է..... և..... բնակարաններ:



171. Ասացեք հսկանիչ ածականներ

Հսկանիչ ածականներ

հաս	— բարակ	հեռու	— . . . .
նոր	— . . . .	ստորջ	— . . . .
գեղեցիկ	— . . . .	ծուլ	— . . . .
նեղ	— . . . .	բարձր	— . . . .
արագ	— . . . .	խոշոր	— . . . .
մաքուր	— . . . .	թանգ	— . . . .

172. Արտագրեցեք և ածականներն ընդգծեցեք:

Կենսատու անձրեվր

Պայծառ լերկնակամարի վրա զորշաղուլն ամսեր լե-  
րեվացին: Ամպերը թանձրացան և սեփ կեղեվով ծածկե-  
ցին կապույտ լերկինքը: Յերեկույան կենսատու անձրե-  
վը ջրեց ծարավ լերկիրը: Դաշտային թառամած բույսե-  
րը զվարթացան. նրանք իրենց բարակ արմատներով խո-  
նավ հողից դուրս ծծեցին սննդարար հյութը: Ծառերի  
փայլուն տերեխներն ազահարար ներս ծծեցին խոնավ  
աղբ: Ճորենի և գարու արտերն իրենց բարձր հասկերի  
նիհար հասիկները լցրին, կշտացրին:

173. Ածականներն ընդգծեցեք:

անձրեվային աշուն	փոթորկալի ծով
աշնանային անձրեվ	ծովային փոթորիկ
դաշտային ծաղիկ	հարվածային բանվոր
ծաղկավետ դաշտ	բանվորական հարված

174. Արտագրեցեք և ընդգծեցեք ածականներն մեկ գծով,  
իսկ այն գոյականները, վորոնց վերաբերում են ընդգծված ած-  
կաները լերկու գծով:

Յես ունեմ մի լավ պատուտակ: Այդ լավ պատուտակին  
ավել եմ լերկու սուրբի: Այդ լավ պատուտակից շատ գո՞

եմ: Իմ լավ պաշուստկով լես պարծենում եմ: Այդ լավ պաշուստիում պահում եմ գրքերս:

Մեր դասարանի աշակերտները լավ պաշուստիներ ունեն, նրանք լավ պաշուստիների մեջ պահում են իրենց գրքերը:

175. Արտագրեցեք բոլոր տեսակի ածականները:

Յես ունեմ սեզ, կարմիր և կապույտ մատիտներ. կարմիրներին ձեռք չեմ տվել, իսկ կապույտներից մեկը տվել եմ Տիգրանին: Յես ամենից շատ սեզով եմ գրում. կարծրով ու կապույտով նկարում եմ: Այսօր կարմիր մատիտով վարդ նկարեցի, իսկ կապույտ մատիտով մանուշակ:

1. ՅՔրբ են ածականները հոլովում, յՔրբ չեն հալովում:
2. Ի՞նչպես են հոլովում ածականները:

Գոյականի հետ գործածվող ածականը անփոփոխ է մնում՝ չի հոլովում:

Յերբ ածականը գործ է ածվում առանց գոյականի, ընդունում է վորոշող հոգ և հոլով֊վում է գոյականի նման:

176. Հոլովեցեք հետևյալ գոյականները՝ իրենց վրա դեր֊ված ածականներով:

կարմիր դրոշ, պայծառ արեւ, քաղցր շաքար, խրամանկ աղվես

Ուղղ.	վախկոտ նապաստակ
Սեռ.	վախկոտ նապաստակի
Տր.	վախկոտ նապաստակի



Հայց.	վախկոտ նապաստակ
Բաց.	վախկոտ նապաստակից
Գործ.	վախկոտ նապաստակով
Ներգ.	վախկոտ նապաստակի մեջ

177. Հոլովեցեք առանձին գործածվող անականներ  
կարմիրը, պայծառը, խորամանկը

	Յեղակի	Հոգնակի
Ուղղ.	լավը	լավերը
Սեռ.	լավի	լավերի
Տր.	լավի (ն)	լավերի (ն)
Հայց.	լավը	լավերը
Բաց.	լավից	լավերից
Գործ.	լավով	լավերով
Ներգ.	լավի մեջ	լավերի մեջ

178 Կարգեցեք նախադասութիւններ, վորոնց մեջ անարգա-  
վար սովորող բառերը գործածված լինեն բոլոր հօլովներով:

179. Հոլովեցեք անաջադիւր անականն առանց դրականի  
և գործածեցեք նախադասութիւնների մեջ:

## XVII. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

180. Կարգացեք նախադասութիւնները ձախ և աջ սյու-  
նակներում:

Ի՞նչ տարբերութիւն կա նրանց մեջ:

Աջ սյունակում Արամ բառի տեղ ի՞նչ բառ և գործածված.

Արամը հարվածալին է: Արամը հարվածալին է:  
Արամը լավ է սովորում: Նա լավ է սովորում:

Վեր դասարանի  
գրասիր աշխարանքները

— Ինքան, շեռագիրդ լավացրել էս  
բայց դու քիչ էս ու շարքու բյուռ  
գարչեան՝ անսխալ գրելու վրա:  
Ջես սյժն արքայգրու բյան Վեգ վաղ  
վի սխալ չես անուս: Ինչեր ենք Վեգ  
ասենից ու Վեգը Զարու հիմն է. Դես  
գեղեցիկ շարագրու բյուռներ է գր-  
բուս: Վեգի բոլորս սխալ է լավա-  
յնեմի վեր գրասիրները: III դասա-  
րաներ Վեժ առագաղթնու բյուռ ու-  
նի գրասիր աշխարանքների Վեգ:  
Նրանի վեց ասուս են. « Գրասիր  
աշխարանքների Վեգ դու՛ք հար-  
վածույնն չե՛ք »



Յես, դու, նա, մեկն, դուք, նեանք գրվում են  
անձի անվան փոխարեն և կոչվում են անձնա-  
կան դերանուններ:

Անձնական դերանունների թիվը կախ-  
ված է այն անունից, փոքրի փոխարեն գրվում են:

Յես, մեկն. առաջին դեմքի դերանուն են:

Դու, դուք. յերկրորդ դեմքի դերանուն են:

Նա, նեանք. յերրորդ դեմքի դերանուն են:

Առաջին դեմք գրվում է խոսող անձի ան-  
վան փոխարեն:

Յերկրորդ դեմք գրվում է խոսակից անձի  
անվան փոխարեն:

Յերրորդ դեմք գրվում է այն անձի փոխա-  
րեն, փոքրի մասին խոսվում է:

182. Նախորդ դասից արտագրված անձնական դերանուն-  
ների վերելք գրեցեք նրանց դեմքը և թիվը. սրինակ՝

II դ. յեզ. I դ. հոգն.

դու

մեկն

## XVIII. Բ Ա Յ

183. Գործողություններից իմացեք յնմրակամ և կարդալիս  
յննթական դրեք կետերի տեղը:

Վոր առարկան ի՞նչ է ամուսնում կամ ի՞նչ է լինում

կողմնադատականը վարում է, տափանում է, ցանում է,  
հնձում է:

• • • •

կարդում է, գրում է, հաշվում է,  
նկարում է:

- • • • ծրում ե, կանաչում ե, ծաղկում ե,  
հասնում ե:
- • • • կարում ե, ձեվում ե, կարկատում ե,  
արդուկում ե:

Այն բառերը, փորոնք ցույց են տալիս, թե առարկան ի՞նչ է անում կամ ի՞նչ է լինում, կոչվում են բայ:

184. Արտագրեցեք բայերը և նրանց դեմքն ու քիվը գրեցեք վերելք:

Ուշ գիշերին գնացքը Թիֆլիս կայարանը հասավ: Մտրությանները վերցրին իրենց ձեռքի իրեղենները և ըշտապեցին դուրս գնալ վազոնից: Շահյանն էլ առավ իր բարձն ու ճամպրուկը և հետեվեց նրանց:

185. Լրացրեք և գրեցեք:

Յեզակի	Հոգնակի
I դեմք. Յես խոսում եմ:	Մենք . . . . :
II դեմք. Դու . . . . :	Դուք . . . . :
III դեմք. Նա . . . . :	Նրանք . . . . :

Յերբ բայը գրվում է առաջին, յերկրորդ և յերրորդ դեմքի գերանունների հետ՝ նրա վերջավորությունը փոփոխվում է:

Բայի փոփոխումը կոչվում է խոնարհում:  
Բայն ունի յերեք դեմք և յերկու քիվ:

186 Կարգալիս յես յենթական փոխարինեցեք դեմ գերանվամբ և գրա համապատասխան փոփոխեցեք ստորոգյալների քիվը և դեմքը:



Առափոտյան յեռ արթնանում եմ, հազնվում եմ, կո-  
շիկներս մաքրում եմ, լվացվում եմ, սանրվում եմ, նա-  
խաճառում եմ և գնում եմ աշխատանքի:

Որինակ՝ Առափոտյան դուք արթնանում եմ:

Ստորոգյալը յենթակալի հետ թվով և  
դեմքով համաձայնում եմ:

187. Արտագրեցեք այս դիմումը:

Հաճուճյաճի անվան  
Միզնակարգ դպրոցի դի-  
մելիսային

Կաշեգործարանի բանվորուհի  
Սիլվեսե Կարապետյանից

Պիմում

Խնդրում եմ ութ փայտեկան փորձուսի Կո-  
լակ շարուսի Կարապետյանին ընդունել  
դպրոցի առաջին դասարանը:

Արա հետը ներկայացնում եմ փորձուսի  
Ժաղկի և Ժննդյան վկայականները:

Ս. Կարապետյան

1936թ. ոգոսյանի 20-ին

Հերեման.

**Չմտաւնաս դիմում գրելու ձեւը**

Դիմում գրում են այսպես.

1. Նախ՝ վերեւում, ձախ կողմը մեծատա-  
նով գրվում է այն հիմնարկի կամ անձի ա-  
նունը, վերին տրվում է դիմումը:

2. Նրա տակն՝ աջ կողմում ցույց է տըր-  
վում, թե ով է ապրիս դիմումը:

3. Դրանից հետո, սողի տակ՝ աջ կողմում  
գրվում է դիմում բառը:

4. Ապա՝ կարմիր սողից (խորքից) համառոտ  
ու պարզ գրվում է՝ ինչ վոր պահանջվում է:

5. Դիմումի վերջում, աջ կողմը գրվում  
է՝ դիմում տվողի ստորագրությունը, իսկ ձախ՝  
կողմը, նախ՝ սարին, ամիսը և ամսաթիվը, և ապա,  
սրա տակը՝ այն տեղի (քաղաքի կամ գյուղի)  
անունը, վորտեղ գրվել է դիմումը:

## XIX. ԲՍՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ՝ ՆԵՐԿԱ, ԱՆՅՅԱԼ, ՅԵՎ ԱՊԱՌՆԻ

189. Արտագրեցեք բայերը:

Յէրբ են կատարվում այս հոգվածում գործածված բայերի  
ցույց տված գործողութունը՝ խոսելու վայրկյանին, առաջ, թե  
հետո:

Յես թողնում եմ անհատական տնտեսութունը և  
մտնում եմ կորսնտեսութուն: Այնտեղ լես մշակում եմ  
հողը մեքենաներով, պայքարում եմ անասնապահության  
զարգացման համար, ուսումնասիրում եմ տնտեսության



կանոնավոր գրվածքը, ամեն կերպ ոժանդակում եմ կուլ-  
լեկտիվի ամրացմանը: Յես հաճախում եմ բոլոր հասա-  
րակական ժողովները, մասնակցութուն եմ ունենում կո-  
սպերատիվի աշխատանքում:

**Յեթե բայի ցույց տված գործողությունը  
խոսելու վայրկյանին և կատարվում, բայը  
զբվում և ներկա ժամանակով (կարգում եմ):**

**Եմ, ես, ք. եմք, եք, են կոչվում են ոժանդակ բայ:  
Ոժանդակ բայը գրվում և առանձին:**

190. Հետեվյալ ձեզով խոնարհեցեք սովորում եմ, գրում եմ,  
նկարում եմ, պատմում եմ, օտարում եմ բայերը:

### Ներկա ժամանակ

Յեզակի

Հոգնակի

կարգում եմ

կարգում եմք

կարգում ես

կարգում եք

կարգում ք

կարգում ենք

191. Նկարագրեցեք մի վորեվ արտազբական աշխատանք՝  
ներկա ժամանակի բայեր գործածելով:

192. Արտագրեցեք բայերը:

Յե՞րբ և կատարվում այս վտտանավորի մեջ գործածված  
բայերի ցույց տրված գործողությունը:

### Գործարանի սուլիչը

Առավոտյան ժամի լսթին

Գործարանի սուլիչն ուժգին

Յերկար հնչեց,

Բարձր կանչեց:

Յեթի բայի ցույց տված գործողութիւնը  
խոսելու վայրկյանից առաջ և կատարված՝  
բայը գրվում և անցյալ ժամանակով (կարգացի):

193. Խոնարհեցեք կարգացի, խաղացի, պատմեցի, նկարագրեցի, բայերը հետեւյալ ձևով:

Անցյալ ժամանակ

Յեզակի	Հոգնակի
գնացի գրեցի	գնացիմ գրեցիմ
գնացիք գրեցիք	գնացիք գրեցիք
գնաց գրեց	գնացին գրեցին

194. Ինքներդ նախադասութիւններ կազմեցեք ազ և ած վերջավորութիւն ունեցող բառերով և գրեցեք հետեւյալ ձևով:

Նրանք գնաց: Մենք ապրանք:

Դուք կարդաց: Կարդացանք գիրք:

1. Ի՞նչ արեց.— գնաց, կարդաց:
2. Ինչպիսի՞ ապրանք.— գնած ապրանք:

Աց վերջավորութիւնը գրվում և բայի անցյալ ժամանակի յեզակի թվի յեւրորդ դեմքում:

Ած վերջավորութիւնը գրվում և այն բառերում, վորոնք լրացումներ են և պատասխանում են ինչպիսի՞ հարցին:

195. Արտադրեցեք բայերը:

Յե՞րբ են կատարվելու այստեղ գործածված բայերի ցույց տված գործողութիւնը. խոսելու վայրկյանի, առաջ, թի՛ կատար



## Միությունների պայտառը

Մոսկվայում կառուցվում է Միությունների պայտառը, փորը լինելու յե ամենաբարձրը և ամենագեղեցիկը ամբողջ աշխարհում: Պայտառի ամենաբարձր մասում դրվվելու յե Լենինի արձանը (75 մետր): Իսկ ամբողջ պայտառը Լենինի արձանի հետ միասին ունենալու յե 415 մետրը բարձրութուն:

**Յեթե բայի ցույց տված գործողությունը խոսելու վայրկյանից հետո յե կատարվելու, բայը դրվում է ապառնի ժամանակով (կարգալու յեմ):**

Ապառնի ժամանակի յեմ, յես, յե, յեմք, յեք, յեմ ոժանդակ բայի ձևերը նու յնպես դրվում են առանձին:

196. Խոնարհեցեք կարգալու յեմ, խաղալու յեմ, պատելու յեմ, նկարագրելու յեմ բայերը հետևյալ ձևով:

### Ապառնի ժամանակ

Յեզակի		Հոգնակի	
զնալու յեմ	զրելու յեմ	զնալու յեմք	զրելու յեմք
զնալու յես	զրելու յես	զնալու յեք	զրելու յեք
զնալու յե	զրելու յե	զնալու յեմ	զրելու յեմ

197. Յուրաքանչյուր բայն արտագրեցեք ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով, միայն յեզակի թվով և առաջին դեմքով:

կառուցում եմ, բարելավում եմ, աջակցում եմ, սովորում եմ, մասնակցում եմ, մրցում եմ, առաջադիմում եմ  
ՈՐԻՆԱԿ՝ կառուցում եմ, կառուցեցի, կառուցելու յեմ:

198. Արտագրեցեք և ընդգծեցեք բայերը.

17-րդ կուսակամագուժարին տված իր ղեկուցման մեջ ընկ. Սաալինն ասաց. ձևվեր կփորձեն հարձակում գոր.



ձել մեր լեզրի վրա՝ ՉախՉախիչ հակահարված կտանան, վորպեսզի այսուհետեւ հանդգնություն չունենան իրենց խողի դունչը կոխելու մեր խորհրդային բանջարանոցը»:

1. Ի՞նչ ժամանակ են ցույց տալիս ընդգծված բայերը:

2. Ոժանդակ բայով, թե՛ առանց ոժանդակ բայի յեն կազմը ված այդ բայերը:

3. Ի՞նչ մասնիկ են ընդունել այդ բայերն սկզբից:

Ապառնի ժամանակը արտահայտվում է նաև առանց ոժանդակ բայի՝ կ մասնիկով:

Կ մասնիկը բային կպած է զրվում (կասեմ, կգրեմ):

199. Խոնարհեցեք կկարգամ, կխաղամ, կգրեմ, կպատմեմ բայերը հետեւյալ ձեւով.

Ապառնի ժամանակ կ մասնիկով

Յեզակի

Հոգնակի

կխաղամ	կսովորեմ	կխաղանք	կսովորենք
կխաղաս	կսովորես	կխաղաք	կսովորեք
կխաղա	կսովորի	կխաղան	կսովորեն

200. Արտագրեցեք բայերը և դեմը գրեցեք բայի ժամանակը, դեմքը և թիվը. Ընդգծեցեք կ մասնիկը.

Միրելի Կոլակ,

Նիստր Տեր դպրոցում սովորակա՛ն դասերը վերջացա՛ն: Ընդհատ կակամե՛ն փարեկա՛ն արու-



գումերը: Վի խելի որից կվե-  
րադանում չեյ Տուր. և Տրապի  
կիանգարանում Տեր հովանուն  
լեռներում: Վեղ կբարչքանում  
Ժողկալեք բյուրերը, կիսեղ  
աղբյուրերի գլգլան գրերը, կր-  
ծեղ լեռնային թաքմ ոչը:

Սոսյոժ սրայել եւ գերա-  
պաղց գեւեհարակալերը:

Ընդունիր սիրայիլ բարեկ-  
ւերս և գերեւագիւ հարթոյրերը:

Բո չեղ բայր Արեւիան  
1936 թ. Տուրաի 25-ի,

Չեղեղան

## XX. ԲԱՅԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԸ

201. Արտագրեցեք բայի ժխտական ձևերը:

Նախկին բատրակ Ալյոշա Լազարեվի պատմածից

Յես դպրոց գնալու ժամանակ չունեւի և չգնացի եր  
Վաղ առափոստան, յերբ մայրս դաշտ եր գնում, գնում  
եյի և լես: Յեւ միայն աչն ժամանակ, յերբ գիշերն սկըս-  
վում եր կախսել, լես անասունները գլուղն կլի քշում:

Մի անգամ գնացի կուլակ Վասիլի Տրուսովի մոտ  
փող ուզելու: Նա ինձ տուն չթողեց, վռնդեց: Այդպես  
եւ փող չսովեցին: Յես անասուներին արածացնում եյի  
արշալուսից մինչև մթնելը: Ստանում եյի շատ չնչին  
վարձատրութլուն: Ամառվա ընթացքում ամենաշատը յե-  
րեք ուլլի և կես փութ հացահատիկ ելին տալիս:

Չգնացի, չթողեց ժխտական ձեւի բայեր են:  
Չ ժխտական մասնիկը բային կպած է  
գրվում:

202. Խոնարհեցեք չեմ բացակայում, չեմ խանգարում, չեմ  
հուսում բայերը ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով,  
յիզակի և հոգնակի թվով, ներքեվում ցույց տված ձևով:

Ներկա ժամանակ	Անցյալ ժամանակ	Ապառնի ժամանակ
չեմ ուշանում	չուշացա	չեմ ուշանալու
չես ուշանում	չուշացար	չես ուշանալու
չի ուշանում	չուշացավ	չի ուշանալու
չենք ուշանում	չուշացանք	չենք ուշանալու
չեք ուշանում	չուշացաք	չեք ուշանալու
չեն ուշանում	չուշացան	չեն ուշանալու



ժխտական ձեվով խոնարհելիս ոժանդակ  
բայն առաջ ե ընկնում և իր վրա յե առնում  
բացասական մասնիկը: Որինակ՝

ուշանում եմ                      ուշանալու յեմ  
չեմ ուշանում                      չեմ ուշանալու

## XXI. ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇ ՁԵՎԸ

203. Արտագրեցեք այս արձանագրութիւննից այն բառերը,  
ժորոնք պատասխանում են ի՞նչ անել հարցին:

### Արշանագրութեան

1936 թ. սեպտեմբերի 20-ին, յերե-  
կոյան ժամի 7-ին, կայացաւ մեւ-  
սական գշուղի կիսագրագիտութեան  
վերապնան դպրոցի սովորողների ժո-  
ղովր:

Լսեցին դպրոցի վարիչի զեկուցու-  
մը արքայադպրոցական աշխատանի-  
ւերի մասին:

Վորոշեցին որակա՛ն Տի ժամ քա-  
նը դաս պատրաստել, դասատու՛նե-  
րի քանձ գրավոր աշխատանքները  
կանոնավոր կատարել, բաժանորդա-  
գրվել թերթի և կարդալ «Ականակ  
ընթերցողի գրադարան»-ի բոլոր  
գրքույկները:

Նախագահ Կ. Աարգւյան

Քարտուղար՝ Ա. Խաչիկյան

Արձանագրութիւնը գրվում է այսպես.

1. Վերեվում փորպես վերնագիր գրվում  
է արձանագրութիւն ըստը:

2. Ամենից առաջ գրվում է ժողովի ժամա-  
նակը, տեղը և ում ժողովն է:

3. Այնուհետեւ յերբեմն գրվում են ներկա  
յեղողների թիվը և բացակայողների անունները  
և ազգանունները:

4. Ապա՝ գրվում են՝ ի՞նչ հարցեր են կննդել  
(լայել) և հետո՝ ի՞նչ փոճումներ են յեղել:

5. Վերջում գրվում է նախագահի և քա-  
րտուղարի անունները և ազգանունները:



Բայի այն ձեվը, վորը պատասխանում է  
ինչ անել հարցին, կոչվում է բայի անորոշ ձեվ-  
որինակ՝ կարգալ, գրել:

204. Կրեցեք ձեր դասարանի վերջին ժողովի արձանագը-  
րությունը:

205. Արտագրեցեք միայն բայի անորոշ ձեվերը:

«Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներն են՝  
վերջնականապես վերացնել դասակարգերը, ավարտել  
ամբողջ ժողովրդական տնտեսութան տեխնիկական վե-  
րակառուցումը և ել ավելի բարձրացնել Միութան աշ-  
խատավոր մասսաների նյութական ու կուլտուրական  
գրությունը», — ասաց ընկ Կալինին իր նառում 17-րդ  
կուս. նամագումարը փակելիս:

## XXII. ԲՍՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՎԸ

206. Արտագրեցեք ընդգծված բայերը՝

Կարգան

Կարգան, այ իմ խելք մանուկ,

Կարգան, գրի՛ր տարին բոլոր:

Յերբ բայի ձեվը ցույց է տալիս, թե խո-  
սողն իր խոսակցին հրամայում կամ գրգռում  
է մի բան անելու, կոչվում է բայի հրամայա-  
կան ձեվ:

Բայի հրամայական ձեվն ունի յերկու թիվ  
և միայն II դեմք:

Բայի հրամայական ձեվի վերջին վանկի  
ձայնավորի վրա շեշտ է դրվում (ցրի՛ր Եւրծե-  
ցե՛՛ք, յողա՛, յողացե՛՛ք):

207. Արտագրեցեք բայի հրամայական ձեւին իրենց վերադրվող լրացումներով:

### Մայիս

Ճամփան ավեր, սանր ու դաշտեր,  
Ճամփան բացեք մեր հյուրին:

Յեթե բայի հրամայական ձեւն իր վրա դրվող լրացում ունի, շեշտն ընդունում է այդ լրացումը (առաջ գնա):

208. Արտագրեցեք՝ հրամայական ձեւերի յեզակի թիվը եօզնակի դարձնելով:

### Կոդունդներ

Ամբաստան խորհրդալին յերկրի պաշտպանութունը:  
Ողինակ վերցրու հարվածալինից: Վերացրու թերութուններդ: Պատրտտալիր դասդ: Բարձրացրու ուսման վորակը:

209. Արտագրեցեք՝ հրամայական ձեւերի հոգնակի թիվը յեզակի դարձնելով:

### Առողջապահական կանոններ

Պահպանեցեք մաքրութուն: Կոտորեցեք ճանճերին:  
Ողափոխեցեք սենյակը: Հետեւեցեք ձեր առողջությանը:

210. Ի՞նչ տարբերութուն կա ձախ և աջ սյունակների նախադասութունների մեջ:

Պարտալիր լուսավոր  
սենյակում:

Նստած կարդա:

Ոոսի՛ր հասկացածդ

հարցերի մասին:

Խաղան բակում, բաց ողում:

Մի՛ պարտալիր մութ  
սենյակում:

Պառկած մի՛ կարդա:

Մի՛ խոսիլ չհասկացածդ  
հարցերի մասին:

Մի՛ խաղա դասարանում:



Յեթե բայի հրամայական ձեւը ցույց է տալիս, փոր խոսողը խոսակցին հրամայում է մի բան շանել, կոչվում է արգելական հրամայական:

Արգելական հրամայականի շեշտը դրվում է արգելական մի բառի ձայնավորի վրա (մի՛ պատմիր, մի՛ գնա):

211. Կազմեցեք կարգապահական կանոններ՝ բայերի հրամայական ձևերով:

212. Գրեցեք պլակատներ՝ արգելական հրամայական բայերով:

### XXIII. ԲՍՏԴ ԲՍՌԵՐ

213. Արտադրեցեք և ընդգծեցեք հաստ դրված բառերը:

Ասրայանցին փարածայռի  
քակ անթողզապես կալստող և  
ավալստող է. ցանկերու, հարմար  
հարմար չէ, բայց այդ քեղերը  
շար հարուստ եւ լեռնապե-  
տակներով՝ ավալստարով,  
թերթափարով, և այլն:



Այն բառերը, փորոնք կազմված են յերկու բառերի միացումից, կոչվում են բարդ բառեր:

Բարդ բառեր կազմող յերկու բառերը կապվում են ա ձայնավորով, փոր և կոչվում ե հոդակապ:

214. Նախորդ աշխատանքում տրված բարդ բառերը վերածեցե՛ք բաղադրի մասերի:

Որինակ՝ սարալանջ՝ սար, լանջ. քարածալո՝ քար, ժայռ:

215. Կազմեցե՛ք բարդ բառեր հետևյալ բառերից և գրեցե՛ք դաշտ, վալր, վարել, հող, բերք, հավաք, շարք, ցան, դաս, գիրք. հատակ, դիժ, աշխարհ, գրութուն, դեղ, տուն

216. Կարդացե՛ք հետևյալ բարդ բառեր և ասացե՛ք, թե ինչո՞վ են տարբերվում նրանք նախորդ աշխատանքի բարդ բառերից:

Բարդ բառեր առանց հոդակապի

ազդանուն, հայրանուն, թելաման, թանաքաման, յերկաթուղի, ծառուղի, բերքառատ, լիառատ, ուսանցք, լուսանցք, գետափ, ծովափ, թոքախոտ, ժանտախոտ

Յերբ բարդ բառի յերկրորդ բաղադրիչ մասը ձայնավորով ե սկսվում, հոդակապ չի գրվում:

217. Կազմեցե՛ք բարդ բառեր հետևյալ բառերից և գրեցե՛ք

արագ, ընթաց նոր, ընտիր դաս, ընկեր

նախ, ընթաց հաս, ընտիր խոսք, ընկեր

Որինակ՝ արագընթաց, նորընտիր, դասընկեր



Բարդ բառերի մեջ, յերբ յերկրորդ բաղադրիչ մասն սկսվում ե ը-ով, այդ ը-ն պետք ե դրել:

218. Կաշղացեք հետևյալ բարդ բառերը և ասացեք, թե այդ բառերն ըստ կազմութեան ինչո՞վ են տարբերվում մինչեւ այժմ մեր սովորած բարդ բառերից:

փայտիոր	հացքուխ	տասնմեկ
արեւմուտք	բանքող	կաթնկեր
թերխաշ	մոմեոր	ձեռնպահ
քարՏաշ	քաղհան	ձեռնհաս

Կան մի քանի բարդ բառեր, փորոնց յերկրորդ միավանկ բաղադրիչ մասս բաղաձայնով ե սկսվում, բայց ա հոգակապ չունեն:

219. Կազմեցեք բարդ բառեր հետևյալ բառերից և գրեցեք:

շոգի, նավ	վոսկի, դուլն	ապակի, գործ
շոգի, բարդ	վոսկի, նկար	կաշի, գործ
շոգի, մեքենա	վոսկի, կազմ	գարի, ջուր

Որինակ՝ շոգենավ, վոսկեգուլն, ապակեգործ:

Յեթե բարդ բառի առաջին բաղադրիչ մասը վերջանում ե ի-ով, այդ ի-ն միանալով ա հոգակապին, տալիս ե ե. որինակ՝ վոսկի, գուլն. վոսկի-ա-գուլն, վոսկեգուլն:

220. Վերլուծեցեք հետևյալ բարդ բառերը:

Վորդեսեր, այգեգործ, գինեգործ, տարեվերջ, տարեակիցք, շոգեկաթսա, ուղեմաս, վոսկեղրամ, ապակեախպ, ուղեգիծ

Որինակ՝ վորդի, սեր, ալդի, գործ:

ի - ը

կրտսար  
կիր, ջուր  
ծագիկ, աման  
խիճ, ուղի  
ամիս, վերջ

ու - ը

մանկամուր  
մանուկ, պարսեզ  
զունդ, ասեղ  
լուր, գէր  
անասուն, սահ

ե - ի

հրավիրատուն  
հրավեր, գէր  
հանգես, սրահ  
պատվեր, սու  
նվեր, բերել

ույ ու

լուսանկար  
լույս, մուտ  
զույգ, ընջաց  
բույս, կեր  
հույս, հատ

Բառակազմության ժամանակ, յերբ առն  
անում ե, այսինքն յետեւից նոր վանկ կամ վան-  
կեր են ավելանում, վերջին վանկի ե, ի, ու  
ձայնավորները և ույ յերկհնչյունը սովորաբար  
փոխվում են:

Վերջին վանկի և միավանկների մեջ

ի և ու փոխվում ե ը ձայնավորի (վոր չի  
գրվում) կամ զուրս ե ընկնում:

ե կարող ե փոխվել ի ձայնավորի:

ույ փոխվում ե ու ձայնավորի:

Հնչյունների այսպիսի փոփոխությունը  
կոչվում ե հնչյունափոխություն:



222. Ինչպիսի բառերից են կազմված հետևյալ բարդ բառերը  
կրկնափեղկ, բժշկապետ, գրչաման, սրտակից, ձրկ-  
նավաճառ, ջրաման, տպագիր, լծակից, հրավառ  
Որհնակ՝ կրկին, փեղկ, ջուր, աման

223. Վերլուծեցեք հետևյալ բարդ բառերը

լրագրավաճառ, հեռագրատուն, յերկաթուղաղիծ, լուսա-  
նկարչատուն, հեռագրասուուն, հրացանաձիգ, կիսագ. աղետ  
Որինակ՝ լուր, գիր, վաճառ. լույս, նկարիչ, տուն:

224. Ասացեք այնպիսի բարդ բառեր, վորոնց յերկրորդ բա-  
ղադրիչ մասն առանձին գործածելիս սկսվի յն յերկհնչյունով:

արեւ, յեւ, արեւեւ, ծով, յեւր, ծովեւր  
վեր, յեւ, վերեւ, լայն, յեւր, լայնեւր  
խայ, յերգ, խայերգ նոր, յեւ, նորեւ  
խուսր, յերգ, խուսերգ հով, յեւ, հովեւ

Յեթե բարդ բառի յերկրորդ բաղադրիչ  
մասն սկսվում է յն յերկհնչյունով, այդ յն-ն  
գառնում է ն:

225. Ասացեք այնպիսի բարդ բառեր, վորոնց յերկրորդ բա-  
ղադրիչ մասն առանձին գործածելիս սկսվի Վ կապակցությունով:

չուկ, վորս-չկնորս բայ, վորոշ-բայորոշ  
բուսն, վորս-բուշնորս բուն, վորոշ-բնորոշ  
վար, վորակ-վարորակ  
բարչր, վորակ-բարչրորակ  
անչրեւ, վորոշ-անչրեւորոշ  
յերիւ, վորոշ-յերիւորոշ

226. Կագմեցեք բառդ բտտե՛ր հնոսիվյալ բտտերից և ապա՛  
զրիցեք:

տաս, յերկու	հայր, յեղբայր	այս, վասկր
տաս, յերեք	մայր, յեղբայր	փիղ, վասկր
բասն, յերեք		
Որինակ՝ տասներկու, հորեղբայր:		

## XXIV. ԱԾԱՆՅԱՎՈՐ ԲՍՌԵՐ

(Ածանցների ուղղագրությունը)

227. Արաագրեցեք:

անկրուսն ասպարախը դժբախը

անարամ ասպուղ փշեղ

անորոշ ասպորինի փգեղ

անեղբ աստերախը չքես

հակագայ գերակարարեղ

հակաողային գերհարվածային

համամիտ վերաշինեղ

ներշնչեղ վերանվանեղ

արքաշնչեղ մակագրեղ

արքաասնեղ մականունի



Բառերի սկզբից դրված մասնիկները, փո-  
րոնք նրանց սկզբնական նշանակու-թյունը փո-  
խում են, կոչվում են նախածանց:

Ա, և, ապ, դժ, ս, չ, նախածանցները կոչվում  
են ժխտական, փորտոհեռի նրանք դրվելով բա-  
ռերի սկզբից, նրանց խմաստը ժխտում կամ մի  
բանի չլինելն են ցույց տալիս:

228. Հետևյալ բառերի մեջ գտեք նախածանցները: Բացա-  
ռելիքը յուրաքանչյուր նախածանցի նշանակու-թյունը:

համակարծիք, հակակարծիք, անգիր, ապաքաղաքա-  
կան, դժգուշն, աձեպ, չխոսկան, ներդրում, արտասահ-  
ման, մակդիր, վերընարու-թյուն, վերանորոգել

229. Գրեցեք հականիշ նախածանցներով բառեր: Նախա-  
ծանցներն ընդգծեցեք:

արտահանել	— ներմուծել	թերակատարել	— . . . .
հակակրող	— . . . .	ձեվավոր	— . . . .
համեզ	— . . . .	զեղեցիկ	— . . . .
սրտաս	— . . . .	բախտավոր	— . . . .

230. Արտագրելիս հետևյալ բառերի մեջ ընդգծեցեք նա-  
խածանցները:

անհամ	սզետ	տհան
անկապ	տկար	մակերես
ապաշնորհ	արտագրել	տհաս
համախոհ	հակասել	համաձայն

231. Յերկու բառով գործածված բառերն արտահայտեցեք  
մեկ ածանցավոր բառով.

առանց վախի, առանց սխալի, առանց արդյունքի

232. Ինքներդ ստացեք ժխտական նախածանցներով բա-  
ռեր և աղա գրեցեք:



233. Ասացեք բառեր հետեւյալ նախածանցներով.  
հակ, համ, գեր, արտ, ներ, անդր, մակ

234. Արտագրեցեք:

**Վերջածանցներ**

ակ, իկ, ուկ.— ճակ, տնակ, շնիկ, մայրիկ, ձաղուկ  
ունի.— աշակերտունի, ուսուցչունի, Հայկունի  
երեն.— հայերեն, ռուսերեն, թուրքերեն

անոց, ւնոց, ոց.— ջուհականոց, հավնոց, ամբոց  
սան, արան.— Հայասան, Ուղղեկսան, դասարան,  
բառարան

ացի, եցի, ցի.— գերմանացի, կարսեցի, լեքեմանցի  
ական, ային.— գլուզական, կոլտնտեսական, խոր-  
հրրդային, հարվածային

ավոր.— սողավոր, լուսավոր, կանոնավոր

բորդ, երորդ.— լեքեբորդ, լեքերորդ, չորբորդ, հինգերորդ,  
վեցերորդ

եղ, եղեն.— ուժեղ, համեղ, կանաչեղեն, փայտեղեն  
վես, ոս.— հասավես, կանաչավես, կեղտոս

իչ, ող.— գրիչ, սափրիչ, վոսկերիչ, գրող, սվաղող  
որդ, ուրդ.— ճանապարհորդ, նավորդ, ժողովուրդ,

խառնուրդ

պան.— այգեպան, պարտիզպան, դռնապան

ուրյուն.— միություն, տնտեսություն, ջանասիրու-

թյուն

աս.— պոչաս, գուհաս, կռնաս

Բառերի վերջից գրված մասնիկները, վո-  
րոնք նրանց սկզբնական նշանակությունը  
փոխում են, կոչվում են վերջածանց:

Սկզբից կամ վերջից ւածանց ունեցող բա-  
ռերը կոչվում են ւածանցավոր:



235. Գտեք հետեւյալ բառերի վերջածանցները, արտաղը-  
րեցեք ձեր տետրերում և խմացեք, թե նրանք բառի ւղղւնա-  
կան նշանակութիւնն ինչպե՞ս են փոխել:

Թխակ, Հակոբիկ, գառնուկ, դերձակուհի, թուրքերեն,  
հունարեն, ծաղկանոց, թռչնոց, խալթոց, Ուզբեկստան,  
ճաշարան, տեղացի, լենինականցի, բանվորական, զոր-  
ժարանային, տանձենի, աշխատավոր

236. Կաղմեցեք ածանցավոր բառեր հետեւյալ վերջածանց-  
ներով և ապա գրեցեք:

### Վերջածանցների ուղղագրութիւնը

կ-ով գրվող  
ակ, իկ, ուկ  
ական

բ-ով գրվող  
երեն  
արան

ց-ով գրվող  
անոց, նոց, ոց  
ցի

ս-ով գրվող  
սՏան  
ալես, ոՏ,  
աս

դ-ով գրվող  
որդ  
ուրդ  
րորդ, երրորդ

ղ-ով գրվող  
եղ  
ող  
եղեն

237. Հետեվյալ անունցավոր բառերի արմատներից բայեր կազմեցեք.

դոչյուն, մանչյուն, հնչյուն, թնդյուն, շաչյուն, սոսափյուն, հաջոց, փոռնոց, ծվլոց, կոկոռոց, ծվոց, ճրոճրոց, սուլոց

238. Հետեվյալ գոյականները դարձրեք ածական՝ համապատասխան վերջածանցներ ավելացնելով կամ ջնջելով յեղածանցը. ամուխ, դեղնուց, սպիտակուց, նեղուց, ամրոց, ջանասիրություն, տաքություն, ուժ, դիր, գուշն

239. Հետեվյալ ածականները դարձրեք գոյականներ՝ հասածանցները կամ վերջածանցները ջնջելով.

համեղ, անդիր, դժգուհն, ապարաստ, ամել, գլուղական, քաղաքալին, լուսավոր, հոտավետ, սոչատ

240. Հետեվյալ ածականները դարձրեք գոյականներ համապատասխան վերջածանցներ ավելացնելով.

սաք, ցուբու, մութ, խորամանկ, կարմիր, ազան, աշխատասեր

241. Հետեվյալ վերջածանցներով բառերի համար գրեցեք նախածանցներով նույնանիշ կամ հակառակիշ բառեր.

սերեվատ, սոչատ, կոնատ, գիտուն, բախտավոր, խելացի, ուժեղ, շնորհալի, գունավոր, գեղեցիկ, որինավոր, համեղ

Որինակ՝ սերեվատ — անսերեվ. սոչատ — անսոչ — սոչավոր:

242. Արտագրեցեք այս հոդվածից անունցավոր բառերը և ընդգծեցեք այդ բառերում նախածանցներն ու վերջացանցները.

Չապաչեֆն աղքատ պուլկացու գավակ էր, շարքալին ղինվոր՝ ցարական բանակում: Մինչեվ հեղափոխութունը նա անդրազետ էր: Բայց հենց ժոր կարգալ-գրել սովորեց, ազանությանը հարձակվեց զբքերի վրա:

Կարմիր բանակում Չապաչեֆն աչքի ընկավ իբրև հերոս հրամանատար: Ամենազովար ճակատում բավական էր, յեթև ներկա չեր Չապաչեֆը, և կարմիր բանակալիսններն անվախ առաջ ելին դնում: Չապաչեֆը կոճում էր միշտ հերոսաբար: Հերոսի պես էլ մեռավ:



243. Միննույն արձատից կազմեցեր մի քանի ածանցավոր  
 և բաց բառեր.

հալ, քույր, նալ, ծաղիկ, վոտ, ձեռ, աչք, սիրտ,  
 լուսին, գետ, լեզու, արծիվ, ջուր, ծով, խնձոր, տետր,  
 արեւ, ձուկ, կապույտ, կարմիր, լույս, շարժ, գեղ.

244. (Ստուգողական առիտահան). Հերթով արտադրեցեք այս-  
 սեղ նկարված առարկաների անունները:

Կարծիք եք դուք այդ բառերը ձեռն գրելը



ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌՈՑՈՒՑՍԿ

Ուղղագրական բառացուցան, գործածում են  
 դժվար գրվող բառերը սխալ չգրելու համար:  
 Բառացուցակները կազմվում են այբբենա-  
 կան կարգով:

ազդ	բարձրախոս	գարգարուն
աղբյուր	բացականչական	գուզվել
աղջիկ	բուրդ	ընգունագ
ամբողջ	Գաբրիել	ընդունել
այբուբեն	գառնուկ	թագունի
այբբենական	գեղջկուհի	ժայթվոս
անգամ	Գեփորգ	թակարդ
անդամ	գոգնաց	թեև
աշխարհագրութուն	Գրիգոր	թուղթ
առաջին	գազար	թվաբանութուն
առաջնորդ	գասամիջոց	ժամագուս
առողջ	գարբիւն	ժողովուրդ
ափազ	գարձ	իբրեմ
արդեն	գարձալ	լուսանկ
արհամարհել	գդում	խեղդել
արտագրութուն	գեղձ	խնայիր
արջ	ղերձակուհի	խոնարհ
բաղաձայն	գպրոց	խոշնուրդ
բարձր	եզուց	



ճագի	յեղակի	պարուսակ
ծծան	լեղբայր	պարզե
կարագ	լեղջերու	պիոններ
կարգապահ	լեղջուր	ջարկ
կարդալ	լերբեմն	ռեթիմ
կենդանի:	լերբեք	ուսելի
հագնել	լերգ	Սուրգիս
Հակոբ	լերեսարբիչ	սեպտեմբեր
հայկել	լերիաասարկ	սրբել
համարձակ	լերէրորդ	Սրբուհի
հայոց	լերրորդ	վազ
հանդերձարան	նախադասութուն	Վարդան
հասոց	նահ	վերջակետ
հոգնակէ	նկարչութուն	վողջուհն
հոգնել	նոյեմբեր	վարդ
հոկտեմբերիկ	օտադուրութուն	վորդի
Հոգհաննետ	շնորհակալ	վորսորդ
հորդ (վարար)	շոգ	ստեսակ
ծագ	տեուկ	տարական
դեկտեմբեր	ոգնել	տեարակ
նանապաշտ	ոգոստոս	րապի
ճանճ	ոգուտ	ցուցահանդես
մախ	օղատկար	փեհուար
Մարգար	ող	փորձանք
Մարգարիտ	ողանավ	փորձ
մարդ	ոն	փոքր
միակ	ուղղագրութուն	փոքր
միկ	ուղտ	քառորդ
միկանք	ուղտ	քերականութուն
միկուն	ուսուցիչ	Քերթ
	չարանքի	Ֆիզիկութուն
	չիլի	

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

	Եջ
I. Նախադասութիւն (վերջայե՛ս) գործածութիւնը) . . . . .	5
II. Առօրանութեան նշանների գործածութիւնը . . . . .	10
III. Բառերի կապակցութիւնը նախադասութեան մեջ . . . . .	14
IV. Մեծատառը հատուկ անունների սկզբում . . . . .	17
V. Հնչույններ և տառեր . . . . .	23
VI. Վանկ և բառերի տողագարձ (ը ձայնավորը տողագար- ձի ժախանակ) . . . . .	28
VII. Ուղղագրական վարժութիւնները գրութեան և արտա- սանութեան անհամապատասխանութեան վերաբերյալ . . . . .	33
VIII. Գրքով և լրագրով աշխատանք . . . . .	41
IX. Գրութեան գործնական ձեւեր (սացական յեվ լիպագրագիր) . . . . .	43

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

X. Յենթական և ստորոգյալը նախադասութեան մեջ (հա- մառոտ նախադասութիւն) . . . . .	46
XI. Լրացուցիչները նախադասութեան մեջ (ընդարձակ նախա- դասութիւն) . . . . .	49
XII. Գոյական . . . . .	52
XIII. Գոյականների թիվը (գաղափար հնչյունափոխութեան մասին) . . . . .	55
XIV. Գոյականների փոփոխող հոգը (ը ձայնավորը բառավեր- ջում յեվ բառակցում) . . . . .	58
XV. Գոյականների հոլովումը (յ ձայնակապ) . . . . .	62
XVI. Ածական . . . . .	72
XVII. Անձնական դերանուններ . . . . .	76
XVIII. Բայ . . . . .	78
XIX. Բայի ժամանակները . . . . .	81



XX. Բայի ծխատեղան ձեվը . . . . .	87
XXI. Բայի անորոշ ձեվը . . . . .	88
XXII. Բայի հրամայական ձեվը . . . . .	90
XXIII. Բարդ բառերը (յե յեվ վո կապակցությունների ուղղագրությունը) . . . . .	92
XXIV. Ածանցաբար բառեր (ածանցների ուղղագրություն) . . . . .	97
Աւղղագրական բառայուցակ . . . . .	104



Պատ. խմբագիր՝ Ա. Ղաբիրյան  
Տեխ. խմբագիր՝ Ք. Զեհյան  
Մտնագրիչներ՝ Հ. Գոլովյանյան, Հ. Մանուկյան

Հանձնված է արտադրության պահանջի 15. 1936 թ.  
Մտնագրված է տպագրության պահանջի 20. 1936 թ.  
Թղթի չափը 26 սմ., արժույթ 30,000, 7<sup>3</sup>/<sub>4</sub> տպագրական մասեր  
Մեկ տպ. մաս. 19184. Նիշ.  
Հրատարակ. 3553. Գյուղ. լիազոր Ա—1170 Պատվեր 1000  
Պետրասի սպարան, Սեբեզան, 11 Դեպոյի № 4



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0013284

9122 7-а. 20-1. 124.

A II  
13035

13035



М. Гаспарян

**Армянский язык**

Грамматика, правописание

Учебник для школ малограмотных

Гиз ССР Армении, Ереван, 1936 г.